ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՈՐՈՇՈՒՄ

___ դեկտեմբերի 2020 թվականի №___Ա
ք.Երևան

ՊԱՅՄԱՆԱԳՐԱՅԻՆ ԵՎ ՏՆՕՐԻՆԵԼԻ ՀԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով, որ՝

ա) Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) 2017 թվականի մայիսի 17-ի №161Ն որոշման 1-ին կետով հաստատված Հայաստանի Հանրապետության էլեկտրաէներգետիկական համակարգի ցանցային կանոնների (այսուհետ՝ Կանոններ) 139-րդ կետի համաձայն՝ պայմանագրային հզորություն ունեցող որակավորված արտադրողը յուրաքանչյուր տարի՝ մինչև դեկտեմբերի 1-ը, Հանձնաժողովի հաստատմանն է ներկայացնում «Էլեկտրաէներգետիկական համակարգի օպերատոր» փակ բաժնետիրական ընկերության (այսուհետ՝ Համակարգի օպերատոր) հետ Կանոնների 138-րդ կետով նախատեսված ժամկետում համաձայնեցված՝ հաջորդ օրացուցային տարվա պայմանագրային և տնօրինելի հզորությունների վերաբերյալ տեղեկատվությունը,

բ) «Հայկական ատոմային էլեկտրակայան», «Միջազգային էներգետիկ կորպորացիա», «Երևանի Ջերմաէլեկտրակենտրոն», «Գազպրոմ Արմենիա» փակ բաժնետիրական ընկերությունները և «Հրազդանի էներգետիկ կազմակերպություն (ՀրազՋԷԿ)» բաց բաժնետիրական ընկերությունը իրենց էլեկտրակայանների 2021 թվականի պայմանագրային և տնօրինելի հզորությունների վերաբերյալ տեղեկատվությունը Հանձնաժողով են ներկայացրել Կանոնների 139-րդ կետով սահմանված ժամկետում՝ մինչև 2020 թվականի դեկտեմբերի 1-ը, և համաձայնեցված Համակարգի օպերատորի հետ,

գ) «ՔոնթուրԳլոբալ Հիդրո Կասկադ» փակ բաժնետիրական ընկերությունն (այսուհետ՝ ՔոնթուրԳլոբալ) իր էլեկտրակայանների 2021 թվականի պայմանագրային և տնօրինելի հզորությունների վերաբերյալ տեղեկատվությունը Հանձնաժողով է ներկայացրել 2020

թվականի հոկտեմբերի 30-ի №0256_2020 գրությամբ, սակայն ներկայացված փաստաթղթերում առկա չէ Համակարգի օպերատորի համաձայնությունը,

դ) Հանձնաժողովի կողմից աշխատանքային կարգով և այնուհետև 2020 թվականի նոյեմբերի 30-ի №ԳԲ/34.3-Մ2-8/4802-2020 գրությամբ հարց է բարձրացվել 2021 թվականի պայմանագրային և տնօրինելի հզորությունների ժամանակացույցը Համակարգի օպերատորի հետ համաձայնեցնելու անհրաժեշտության մասին, որի արդյունքում Համակարգի օպերատորի, Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության (այսուհետ՝ Նախարարություն), Հանձնաժողովի և ՔոնթուրԳլոբալի միջև առաջացել են տարաձայնություններ՝ վերջինիս Շամբի հիդրոէլեկտրակայանի 2021 թվականին նախատեսվող նորոգման ժամկետների հետ,

ե) Հանձնաժողովի 2019 թվականի դեկտեմբերի 25-ի №510Ա որոշմամբ նախատեսված էր ՔոնթուրԳլոբալի Շամբի հիդրոէլեկտրակայանի թիվ 1 հիդրոագրեգատը նորոգման նպատակով 92-օրյա կանգառից հետո հանձնել շահագործման 2020 թվականի նոյեմբերի 1-ից, իսկ թիվ 2 հիդրոագրեգատը նորոգման նպատակով 122-օրյա կանգառից հետո՝ 2020 թվականի դեկտեմբերի 1-ից,

զ) ՔոնթուրԳլոբալը 2020 թվականի սեպտեմբերի 30-ի №0238_2020 գրությամբ տեղեկացրել է, որ Շամբի հիդրոէլեկտրակայանի թիվ 1 հիդրոագրեգատի նորոգման ժամկետը հետաձգվում է 41 օրով՝ մինչև 2020 թվականի դեկտեմբերի 12-ը, իսկ թիվ 2 հիդրոագրեգատի նորոգման ժամկետը՝ 67 օրով՝ մինչև 2021 թվականի փետրվարի 6-ը՝ այն պայմանավորելով կորոնավիրուսի (COVID-19) համավարակով, Հայաստանի Հանրապետությունում հայտարարված ռազմական դրությամբ և աշխատանքներն իրականացնող «Վոյթ Հիդրո», «Էֆասեկ» կապալառու ընկերությունների կողմից ուշացումների և վերջիններիս աշխատակիցների դեմոբիլիզացվելու հետ,

է) Հանձնաժողովը 2020 թվականի հոկտեմբերի 8-ի №ԳԲ/34.3-Մ2-3/4252-2020 գրությամբ հայտնել է, որ իր 2019 թվականի դեկտեմբերի 25-ի №510Ա որոշմամբ հաստատված՝ ՔոնթուրԳլոբալի 2020 թվականի պայմանագրային և տնօրինելի հզորությունների փոփոխությանը կարող է անդրադառնալ Կանոնների պահանջներին համապատասխան կազմված և Համակարգի օպերատորի հետ համաձայնեցված 2020 թվականի նորոգումների և հզորությունների նոր ժամանակացույցն ստանալուց հետո, որն այդպես էլ չի ներկայացվել,

ը) ՔոնթուրԳլոբալի 2020 թվականի հոկտեմբերի 30-ի №0256_2020 գրությամբ Հանձնաժողով ներկայացված 2021 թվականի պայմանագրային և տնօրինելի

հզորությունների վերաբերյալ տեղեկատվության և 2020 թվականի նոյեմբերի 23-ի №0277_2020 գրության համաձայն՝ Շամբի հիդրոէլեկտրակայանի թիվ 1 հիդրոագրեգատի նորոգման ժամկետը կրկին նախատեսվում է հետաձգել մինչև 2021 թվականի ապրիլի 1-ը, իսկ թիվ 2 հիդրոագրեգատի նորոգման ժամկետը՝ մինչև 2021 թվականի հուլիսի 1-ը, ինչի արդյունքում նշված հիդրոէլեկտրակայանների համար սկզբնապես պլանավորված համապատասխանաբար՝ 92-օրյա և 122-օրյա նորոգման ժամկետները դառնում են 243 օր և 334 օր՝ խնդիրներ ստեղծելով էլեկտրական էներգիայի սպառողների սակագների վրա բացասական ազդեցության տեսանկյունից,

թ) ՔոնթուրԳլոբալի Շամբի հիդրոէլեկտրակայանի նորոգման ժամկետների զգալիորեն հետաձգումների հարցի շուրջ Հանձնաժողովի, Նախարարության, Համակարգի օպերատորի և ՔոնթուրԳլոբալի միջև 2020 թվականի նոյեմբերի 23-ին Հանձնաժողովում տեղի են ունեցել քննարկումներ, որի ընթացքում ՔոնթուրԳլոբալի կողմից նորոգման ժամկետների նման հետաձգումների պատճառ կրկին նշվել է կորոնավիրուսի (COVID-19) համավարակը, Հայաստանի Հանրապետությունում հայտարարված ռազմական դրությունը և «Վոյթ Հիդրո», «Էֆասեկ» կապալառու ընկերությունների կողմից ուշացումների ու վերջիններիս աշխատակիցների դեմոբիլիզացվելու հանգամանքը: Միևնույն ժամանակ, քննարկվել է Շամբի հիդրոէլեկտրակայանի նորոգման աշխատանքները ավելի շուտ ավարտելու հնարավորության հարցը՝ նախնական պայմանավորվածություն ձեռք բերելով դիտարկել թիվ 1 հիդրոագրեգատի նորոգումը մինչև 2021 թվականի մարտի 1-ը, իսկ թիվ 2 հիդրոագրեգատի նորոգումը մինչև 2021 թվականի ապրիլի 1-ը ավարտելու տարբերակը, սակայն ՔոնթուրԳլոբալը 2020 թվականի նոյեմբերի 24-ի էլեկտրոնային փոստով Հանձնաժողովին, Նախարարությանը և Համակարգի օպերատորին տեղեկացրել է, որ ներքին քննարկումների արդյունքում Շամբի հիդրոէլեկտրակայանի թիվ 1 հիդրոագրեգատի նորոգման ժամկետը հնարավոր է կրճատել 1 ամսով՝ սահմանելով մինչև 2021 թվականի մարտի 1-ը, իսկ թիվ 2 հիդրոագրեգատի նորոգման ժամկետը՝ 15 օրով՝ սահմանելով մինչև 2021 թվականի հունիսի 15-ը, ինչպես նաև նշել է, որ ՔոնթուրԳլոբալի իրավաբանական թիմը կպատրաստի ավելի մանրամասն և համափարպակ վերլուծական տեղեկանք՝ կապալառուների կողմից ուղղված ֆորս-մաժորային ծանուցումների և համապատասխան պայմանագրերից բոլոր հողումների վերաբերյալ, ինչն ըստ ՔոնթուրԳլոբալի կարծիքի այն է, ինչ խնդրել էր ներկայացնել Նախարարության ներկայացուցիչը,

ժ) Հանձնաժողովի 2020 թվականի նոյեմբերի 30-ի №ԳԲ/34.3-Մ2-8/4798-2020, №ԳԲ/34.3-Մ2-8/4799-2020 և №ԳԲ/34.3-Մ2-8/4802-2020 գրություններով

համապատասխանաբար՝ Նախարարությանը, Համակարգին օպերատորին և ՔոնթուրԳլոբալին տեղեկացվել է, որ Շամբի հիդրոէլեկտրակայանի թիվ 1 հիդրոագրեգատի նորոգման ժամկետը մինչև 2021 թվականի մարտի 1-ը և թիվ 2 հիդրոագրեգատի նորոգման ժամկետը մինչև 2021 թվականի հունիսի 15-ը երկարաձգելը չի հիմնավորվել, և նույն գրությամբ ներկայացված «Պայմանագրային և տնօրինելի հզորությունները հաստատելու մասին» որոշման նախագծով առաջարկվել է Շամբի հիդրոէլեկտրակայանի թիվ 1 հիդրոագրեգատի նորոգումն ավարտել մինչև 2021 թվականի մարտի 1-ը, իսկ թիվ 2 հիդրոագրեգատի նորոգումը՝ մինչև 2021 թվականի ապրիլի 1-ը,

ժա) ՔոնթուրԳլոբալի 2020 թվականի դեկտեմբերի 8-ի №0290_2020 և 2020 թվականի դեկտեմբերի 9-ի №0291_2020 գրություններով Հանձնաժողովին և Նախարարությանն առաջարկվել է Շամբի հիդրոէլեկտրակայանի թիվ 1 հիդրոագրեգատի նորոգումն ավարտել մինչև 2021 թվականի մարտի 1-ը, իսկ թիվ 2 հիդրոագրեգատի նորոգումը՝ մինչև 2021 թվականի հունիսի 15-ը՝ նման հետաձգումների պատճառ կրկին նշելով կորոնավիրուսի (COVID-19) համավարակը, Հայաստանի Հանրապետությունում հայտարարված ռազմական դրությունը և «Վոյթ Հիդրո», «Էֆասեկ» կապալառու ընկերությունների կողմից ուշացումների ու վերջիններիս աշխատակիցների դեմոբիլիզացվելու հանգամանքը,

ժբ) Համակարգի օպերատորը 2020 թվականի դեկտեմբերի 8-ի №01-ՄՄ-12/855 գրությամբ նույնպես առաջարկել է ՔոնթուրԳլոբալի Շամբի հիդրոէլեկտրակայանի թիվ 1 հիդրոագրեգատի նորոգումն ավարտել մինչև 2021 թվականի մարտի 1-ը, իսկ թիվ 2 հիդրոագրեգատի նորոգումը՝ մինչև 2021 թվականի հունիսի 15-ը, սակայն չի նշել այն Նախարարության հետ համաձայնեցված լինելու մասին,

ժգ) Նախարարությունը 2020 թվականի դեկտեմբերի 21-ի №ՍՊ/22.5/35740-2020 գրությամբ առարկություն չի ունեցել «Պայմանագրային և տնօրինելի հզորությունները հաստատելու մասին» այն որոշման նախագծի առնչությամբ, համաձայն որի Շամբի հիդրոէլեկտրակայանի թիվ 1 հիդրոագրեգատի նորոգումը նախատեսվում է ավարտել մինչև 2021 թվականի մարտի 1-ը, իսկ թիվ 2 հիդրոագրեգատի նորոգումը՝ մինչև 2021 թվականի ապրիլի 1-ը,

ժդ) Նախարարությունը 2020 թվականի դեկտեմբերի 22-ի №ՀՎ/22/36360-2020 գրությամբ, ի պատասխան Համակարգի օպերատորի 2020 թվականի դեկտեմբերի 8-ի №01-ՄՄ-12/857 գրության, Համակարգի օպերատորին և Հանձնաժողովին հայտնել է, որ ՔոնթուրԳլոբալի կողմից չեն ներկայացվել պատշաճ հիմնավորումներ Շամբ հիդրոէլեկտրակայանի նորոգման աշխատանքների իրենց կողմից առաջարկվող

ժամկետների երկարաձգման վերաբերյալ, ՔոնթուրԳլոբալի առաջարկած տարբերակը ընդունելի չէ Նախարարության համար և առաջարկել է Շամբի հիդրոէլեկտրակայանի թիվ 1 հիդրոագրեգատի նորոգման վերջնաժամկետն ընդունել 2021 թվականի մարտի 1-ը, իսկ թիվ 2-ի նորոգման վերջնաժամկետը՝ 2021 թվականի ապրիլի 1-ը,

ժե) Համակարգի օպերատորը 2020 թվականի դեկտեմբերի 23-ի №08/50 գրությամբ հայտնել է, որ Նախարարության հետ քննարկումների արդյունքում չեղյալ է համարում ՔոնթուրԳլոբալի պայմանագրային և տնօրինելի հզորությունների առնչությամբ իր 2020 թվականի դեկտեմբերի 8-ի №01-ՄՄ-12/857 գրությամբ տրված համաձայնությունը՝ առաջարկելով իր տարբերակը, համաձայն որի Շամբի հիդրոէլեկտրակայանի թիվ 1 հիդրոագրեգատի նորոգումը նախատեսվում է ավարտել մինչև 2021 թվականի մարտի 1-ը, իսկ թիվ 2 հիդրոագրեգատի նորոգումը՝ մինչև 2021 թվականի ապրիլի 1-ը,

ժզ) ՔոնթուրԳլոբալի կողմից պատշաճ կերպով չի հիմնավորվել Շամբի հիդրոէլեկտրակայանի նորոգման ժամկետների՝ իր կողմից առաջարկվող շուրջ 2.6 անգամ երկարաձգումը և նշված հարցի շուրջ 2020 թվականի նոյեմբերի 23-ին Հանձնաժողովի, Նախարարության, Համակարգի օպերատորի և ՔոնթուրԳլոբալի միջև Հանձնաժողովում տեղի ունեցած քննարկումների ժամանակ ընդունելի է համարվել Շամբի հիդրոէլեկտրակայանի թիվ 1 հիդրոագրեգատի նորոգումը ավարտել մինչև 2021 թվականի մարտի 1-ը, իսկ թիվ 2 հիդրոագրեգատի նորոգումը՝ մինչև 2021 թվականի ապրիլի 1-ը,

և հիմք ընդունելով «Էներգետիկայի մասին» օրենքի 22-րդ հոդվածի 8-րդ կետը և Կանոնների 16-րդ գլուխը՝ Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը **որոշում է**.

1. Հաստատել «Հայկական ատոմային էլեկտրակայան», «Միջազգային էներգետիկ կորպորացիա», «Երևանի Ջերմաէլեկտրակենտրոն», «ՔոնթուրԳլոբալ Հիդրո Կասկադ» փակ բաժնետիրական ընկերությունների, «Հրազդանի էներգետիկ կազմակերպություն (ՀրազՋԷԿ)» բաց բաժնետիրական ընկերության և «Գազպրոմ Արմենիա» փակ բաժնետիրական ընկերության շոգեգազային ցիկլով էլեկտրական էներգիա արտադրող «Հրազդան-5» կայանի 2021 թվականի պայմանագրային և տնօրինելի հզորությունները՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2021 թվականի հունվարի 1-ից և գործում է մինչև 2022 թվականի հունվարի 1-ը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ **Գ. ԲԱՂՐԱՄՅԱՆ**

ք. Երևան
___ դեկտեմբերի 2020թ.